ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 21

«09» 04 2018 թ. գ. Երևան

ԴԱՏԱԽԱԶԻ ԵՐԴՈՒՄ ՏԱԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 8-Ի N 33 ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պահանջի կատարումն ապահովելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով, 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 30-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով, 43-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածով՝

Հրամայում եմ՝

1. Հաստատել դատախազի երդում տալու կարգը՝ համաձայն հավելվածի (կցվում է):
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2007 թվականի հունիսի 8-ի՝ «Դատախազի երդման արարողակարգը սահմանելու մասին» N 33 հրամանը:
3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը վերցնում եմ ինձ վրա:
4. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին և ավագ դատախազին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին և Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության
գլխավոր դատախազի
2018թ. ապրիլի 9-ի
N 21 հրամանի

ԿԱՐԳ

ԴԱՏԱԽԱԶԻ ԵՐԴՈՒՄ ՏԱԼՈՒ

1. Սույն կարգով սահմանվում է դատախազի երդում տալու կարգը:

2. Առաջին անգամ դատախազի պաշտոն զբաղեցնող անձն իր պաշտոնն ստանձնում է նշանակվելուց հետո դատախազության կոլեգիայի առաջիկա նիստում հանդիսավոր պայմաններում տված երդմամբ:

3. Կոլեգիայի նիստը նախագահողը հայտարարում է երդման արարողությունը սկսելու մասին:

4. Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի պետը ներկայացնում է երդվող դատախազին, որից հետո վերջինս մոտենում է ամբիոնին, բարձրաձայն ընթերցում երդման տեքստը և ստորագրում այն: Այնուհետև Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը (այսուհետ՝ գլխավոր դատախազ) շնորհավորում է երդում տված դատախազին:

5. Բոլոր դատախազների երդում տալուց հետո գլխավոր դատախազը, կամ, նրա հանձնարարությամբ գլխավոր դատախազի տեղակալը հանդես է գալիս երդում տված դատախազներին ուղղված խոսքով:

6. Արարողության ավարտին հնչում է Հայաստանի Հանրապետության օրհներգը:

7. Դատախազի ստորագրած երդման տեքստը պահվում է նրա անձնական գործում: